

ՀԻՍՈՒՄ ԳԱԼԻԼԵԱՅԻ

Ավետարանների չնկատված շերտի մասին

Ավետարանական պատումներն ուսումնասիրելիս ուշադրություն են գրավում մի քանի փաստեր, որոնք մինչ այժմ գրեթե չեն նկատվել, եւ որոնք հնարավորություն են տալիս նորովի նայել ավետարանների ստեղծման պատմությանը:

Առաջինը՝ աստվածամոր անունն է՝ Մարիամ, ինչը չափազանց նման է հենց «մայր» հայերեն բառին: Սովորաբար «Մարիամ» անունը սեմական է համարվում, սակայն նախահնդեւրոպական «mater» («մայր») եւ «merio» («կին, աղջիկ») բառերը մի շարք լեզուներում տալիս են դրան չափազանց մոտ ձեւեր, օրինակ՝ «merio» բառը տալիս է, հայերենում՝ «մարի» («Էգ թոջուն»), սանսկրիտում՝ «marya» («սիրական»), «mater» բառը՝ իրանական «meri»: Սրան, կարելի է կցել, թերեւս եւ կելտական «մայր» իգական ոգիների անունը, ինչպես անում է Ալիշանը (ըստ Աճառյանի): Սրանց եւ «Մարիամ» բառի նմանությունն ակնհայտ է, հատկապես եթե հիշենք, որ այլ լեզուներով հայերենում ընդունված այդ անվանը համապատասխանում են «Մարիա», «Մերի» անունները: Իհարկե, պետք չէ մոռանալ, որ ավետարանական պատմությունները վերաբերում են սեմական միջավայրին եւ «Մարիամ» անվան համար կան մի շարք ստուգաբանություններ. «հիասքանչ», «դառը», «տիրուհի», «Աստծո սիրեցյալ», եւ եթե այս փաստը միակը լիներ այն կարելի էր դիտել սոսկ որպես զուգահեյություն (Չնայած որ ստուգաբանության տարբերակների բազմազանությունը կասկածանք է հարուցում, որ «Մարիամ» անունը սեմականում պարզապես նախահնդեւրոպական փոխառություն է, որը միայն փորձ է արվում վերաստուգաբանել սեմական լեզուների հիման վրա):

Եւ փաստն էլ այս միակը չէ: Մյուս փաստը «հիւսն» («փայտագործ») բառի ստուգաբանությունն է: Հնդեւրոպական մի շարք լեզուների՝ հայերեն «հիւս», «ազգ», «ազատ», ռուսերեն՝ «взяв» («հյուս»), «узав» («կապեր»), «язык» («լեզու», «ազգ»), «союз» («միություն»), «изба» («գերանաշեն տուն»), թերեւս, նաեւ գերմանական «Haus» («տուն») եւ մի քանի այլ բառերի կազմում երեւում է մեծ զարգացում ստացած մի արմատ, որի բանաձեւն է՝ «ծայնավոր + [ս]/[զ]», եւ որի հիմաստը կարելի է վերականգնել, որպես «կապ»: «Հյուսն» բառը չափազանց նմանվում է «Յիսուս» անվանը: Իսկ *Յիսուսը հիւսն էր* («Յիսուսի» վերջին «-ուս»-ը լատինական ածանց է), հետեւապես, սա ավետարանական պատմության շարադրանքում արդեն երկրորդ դեպքն է, երբ անձի անունը, որը համարվում է սեմական արմատից ծագած (եբր. Յոշուա, ինչը նշանակում է «Տերը՝ փրկություն») անսպասելիորեն համահունչ է գտնվում հնդեւրոպական բառին, որն այդ շարադրանքում նրա դերի անվանումն է, եւ զուցե սոսկ պատահաբար է հիշեցնում համապատասխան հրեական անունը:

Ուրեմն ունենք արդեն *երկու* նմանություն: Սա արդեն ստիպում է զարմանալ, սակայն միեւնույն է քիչ է օրինաչափության համար: Հոգուտ պատահականության խոսում է նաեւ անհավանականությունը, որ կարող էին, օրինակ, հայկական բառերը փոխառվել Պաղեստինում՝ սեմական աշխարհի խորքում: Բայց զուցե կա որեւէ ա՞յլ հնդեւրոպական լեզու, որում նշված արմատները կարող էին ստացած լինել հայերենին մոտիկ զարգացում, եւ որը, թեկուզ եւ տեսականորեն, կարող էր հետք թողնել սեմական միջավայրում: Եւ ահա, Պաղեստինի տեղանունների ուսումնասիրությունը հուշում են, որ այդ դերում կարող էր հանդես գալ *գալլերի՝* կելտական ցեղերից մեկի լեզուն: Խոսքը նախ եւ առաջ վերաբերում է «*Գալլիլեա*» երկրին, որտեղ ըստ ավետարանների ծնվել է Հիսուսը, եւ որի անունը կարելի է մեկնել, որպես «գալլերի երկիր»:

Ինչպես եւ նախորդ դեպքերում էր, այս անունը նույնպես ունի եբրայական ստուգաբանություն («գալիլ» նշանակում է «մարզ»): Սակայն կելտական ցեղերի բնակության հսկայական տարածքում, որը տարածվում է Կասպից ծովից մինչեւ Բրիտանական կղզիներ, կան բազմաթիվ տեղանուններ, որոնց ծագումը կելտերի ցեղանուններից կասկած չի հարուցում. *Գիլան* (մարզ՝ Իրանում), *Գեղամա* լեռներ՝, *Գողթ* գյուղը, *Գիլան*, *Գայլ* գետեր՝ Հայաստանում, *Գալլիա*, *Գալատիա*, *Գալիցիա*, *Հելվետիկա* եւ այլն: Սրանք հետագծում են բոլոր այն ուղիները, որով շարժվել են կելտական ցեղերը՝ գալլերը, փոխելով իրենց բնակության վայրերը՝ հազարամյակների ընթացքում: Ու նաեւ Պաղեստինում կան տեղանուններ, որոնք բացահայտորեն համահունչ են «Գալլիլեա» բառին, սակայն չունեն նույնքան ակնհայտ ստուգաբանություն՝ սեմական հողի վրա: Օրինակ՝ *Գուլանի* բարձրություններ, Վադի *Կելտ* եւ այլն: Որպես եւս մի օրինակ կարելի է բերել Եգիպտոսի մայրաքաղաքի *Կահիրե* անունը (որից ոչ հեռու, ինչպես համարվում է, ապաստանել էր Հիսուսի ընտանիքը՝ Եգիպտոսում եղած ժամանակ): Սովորաբար համարվում է, որ այն հիմնել են արաբները՝ 7-րդ դարում, իսկ անունը ծագում է արաբական «ալ-Կահիրա»-ից, որ նշանակում է «հաղթական»: Սակայն եւ ա՞յս անգամ պարզվում է, որ այս

տեղանունը կարող է ունենալ եւ ա՛յլ բացատրություն. «կաիր» կելտերեն պարզապես նշանակում է «քաղաք»: Այդ դեպքում այս անունը գտնվում է մեկ շարքում այնպիսի քաղաքների անունների հետ, ինչպիսիք են «Պոլիսը», «Բուրգը», «Վանը», «Քաղաքը» եւ այլն: Սա հնարավորություն է տալիս ենթադրել, որ այս տեղում քաղաք կարող էր եղած լինել եւ նախքինում՝ դեռ հռոմեական նվաճումից առաջ, իսկ արաբների օրոք այս անունը վերաստուգաբանվել է: Հետաքրքիր է նաեւ «կաիր» բառի զուգահեռը կրկին հայերեն «կայ» արմատի հետ: Համեմատեք. *կայ*-ան:

Ինչպես տեսնում ենք, նշված տարածքում կան հնարավոր կելտական ծագմամբ բավարար քանակությամբ տեղանուններ, որպեսզի հնարավոր համարենք այս տարածքում կելտական ցեղերի ներկայությունն այստեղ (մոտավորապես մ.թ.ա. 1 հազարամյակի սկզբից), որոնք կարող էին ազդեցություն գործել իրենց սեմացի հարեւանների վրա: Ապրելով հրեաների հետ կողք-կողքի կելտերը կարող էին ձուլվել նրանց միջավայրում, փոխանցելով միաժամանակ, իրենց ազգային բնագծերը: Որպես սրա հաստատում կարելի է դիտել եւ այն փաստը, որ Նույնիսկ մ.թ. 1-ին դարում գալիլեացիները մաքուր հրեաներ չէին համարվում, այլ՝ հեթանոսներ, ինչը երեւում է Հովսեփոս Ֆլավիոսի գրքերից, ինչպես նաեւ ավետարաններից (Մատթեոս 4:15): Հայտնի է նաեւ, որ գալիլեացիները զգալիորեն ավելի մարտատենչ էին, քան մյուս հրեաները, իսկ մարտատենչությունը կելտերի հատկանիշներից էր:

Եթե ճիշտ է ենթադրությունը, ապա նրանք կարող էին հաղորդել հարեւաններին նաեւ առասպելական սյուժեները, որոնք կարող էին տարածվել ժողովրդի մեջ: Հետագայում, *իրական քարոզիչը* կարող էր դրանք ընդունել որպես իր գաղափարաբանության տիսական հիմք:

Պետք է ասել, որ «Գալիլեա» բառի կելտական ծագումը («գալլերի երկիր») նկատվել էր դեռ ԺԹ դարում, երբ կելտական ազգերի ազգային ինքնագիտակցության վերելք էր սկսվել, եւ որոշ ազգայնականներ սկսել էին պնդել, որ ե՛ւ Հիսուսը, ե՛ւ առաքյալները կելտեր են: Սակայն ինչպես հաճախ է լինում, ուռա-հայրենասիրությամբ առաջարկված այս պարզունակ բացատրությունը բերել էր նրան, որ ավետարանների կելտական շերտի ուսումնասիրումը ըստ էության շարունակություն չէր ստացել: Սակայն փաստերի անկողմնակալ եւ մանրակրկիտ ուսումնասիրումը հնարավորություն է տալիս դիտել դրանք այլ լույսի ներքո:

Իսկ ամենազարմանալի փաստն այն է, որ գալլերի աստվածներից մեկի անունն է «Եզուս»: Տարբեր մեկնաբանությունների համաձայն այն համարվում է ռազմի, արեւի, արգասաբերության աստվածը: Փարիզի եւ Տրիբի հռոմեական խորաններում նրան պատկերել են կացինը ձեռքին՝ կաղնու ծառի տակ կանգնած փայտահատի (հյունսի՞)՝ կերպարով: «Եզուսը» լատինացված անվանումն է, որը կիրառում են հին հռոմեացի հեղինակները՝ Յուլիոս Կեսարը, Լուկիանը: Այս անունը ստուգաբանվում է տարբեր ձևերով, «տեր-աստված», «ցանկալի», «բարի»: Բայց հետաքրքիր է այն, որ «Եզուս» է հնչում նաեւ Հիսուսի լատինականացված անունը, որտեղ «-ուսը»-ը լատինական վերջածանց է: Այս համընկնումը հատկապես հետաքրքիր է, քանի որ համընկնում են երկու կերպարների կապը փայտամշակման հետ. մեկը՝ փայտահատ, մյուսը՝ հյունս: Հազիվ թե սա պատահական լինի:

Այս փաստի արձանագրումից հետո, ըստ երերույթին, կարելի է խոսել ավետարանական պատմությունների արտահայտված կելտական դիցաբանական շերտի մասին: Ավետարանների այդ շերտը, պայմանականորեն կարելի է անվանել *Գալլիստ* («գալլացի»)՝ Հին կտակարանի առաջին գրքերի առանձին շերտերի գիտության մեջ ընդունված անվանման (Յահվիստ, Էլլոհիստ) նմանությամբ), իսկ հրեական հողի վրա ստեղծված պատմական դեպքերի շարադրանքը՝ *Յուդիստ* («Յուդացի»): Եւ հետագա հետազոտությունների նպատակը պիտի լինի այդ շերտերի լրացուցիչ ուսումնասիրությունը՝ տարանջատումը, թվագրումը, իմաստաբանության բացահայտումը: Բայց արդեն եղած նյութերի հիման վրա կարելի է որոշ արձանագրություններ կատարել:

Այսպես, ըստ երեւույթին, *Գալլացուն* է պատկանում նախ եւ առաջ «Ես»-ի կամ «Եսու»-ի (թերեւս այս տեսքը պիտի որ ունենար այդ անունը, որ լատինական ձեւով դառնար «Եզուս», երբայերենում «Յոշուա», հայերենում եւ բազմաթիվ այլ լեզուներում՝ «Յիսուս», արաբերենում՝ «Իսա») կերպարը: Կելտական դիցաբանությունում Եսը մի կողմից մարտնչող, ռազմի, արեւի աստված էր (ռազմի, արեւի աստծու հատկանիշներով է իրեն բնորոշում եւ ավետարանական Հիսուսը. «*չեկա խաղաղութիւն գցելու այլ սուր*», Մատթեոս 10:34, «*լոյսն եմ աշխարհի*», Հովհաննես 9:5), մյուս կողմից՝ կերտող, հյունս, արգասաբերության աստված («*Ես եմ ... կենսքը*», Հովհաննես 14:6), որի ծեսի մասն էր կաղնու ծառի շուրջը ոլորվող կելտական սրբազան բույսը՝ *ճագոմը*՝ կյանքի խորհրդանիշը. որին քրիստոնեական խորհուրդների շարքում համապատասխանում է, թերեւս, *կենաց ծառը*: Ըստ Հովիոս Կեսարի տվյալների, Եսին (Եսուին) *մարդկային* զոհեր էին մատուցում, ընդ որում դա արվում էր կաղնու վրա զոհին *կախելու* միջոցով: Սա Նույնպես զուգահեռ ունի ավետարանային պատմության մեջ. Հիսուսը զոհաբերվում է կախվելով *փայտե* խաչից: Վերջապես, այդ վերջին պահին Հիսուսի կողքին են նրա երեք մտերիմ կանայք, եւ

որքան էլ տարօրինակ է, դրանց բոլոր երեքի անունն էլ Մարիամ է. «Եւ Յիսուսի խաչի մօտ կանգանձ էին նորա մայրը, եւ նորա մօր քույրը՝ Մարիամը Կղենովայի կինը, եւ Մարիամ Մագդաղենացին» (Յովհաննես 19:25): Սա կարող է զարմանալի թվալ. այդ ի՞նչ զուգահիսություն էր: Սակայն երբ դիտում ենք կելտական առասպելաբանության տեսանկյունից ամեն ինչ պարզ է դառնում: Բանն այն է, որ կելտերի դիցաբանության մեջ եղել է մայր-ոգիների (դիցուհիների)՝ «մայրերի» պաշտամունք, որոնց պատկերում էին *նստած դիրքում մանուկ կերակրող* կամ ձեռքերում արգասաբերությունը խորհրդանշող առատության եղջյուր կամ պտուղներ պահած *երեք* կանանց տեսքով:

Իսկ *Յուդացուն* է պատկանում շրջող պատմական քարոզիչի կյանքը եւ գործերը նկարագրող ամենածավալուն շերտը: Ընդ որում, որքան էլ անսպասելի թվա, այդ քարոզիչի անունը թերեւս մեզ անհայտ է: Փաստորեն մենք նրանք անվանում ենք Յուսն՝ իր մասնագիտության անունով, ինչն, ի դեպ հնում տարածված երեւույթ էր: Կարող է նրա անունը իրոք եղել է Յոշուա, եւ հենց այդ անունն է դարձել շփոթության պատճառը, սակայն նա կարող էր ունենալ եւ ցանակացած այլ անուն, որը մեզ չի հասել, քանի որ փոխարինվել է մասնագիտության անվանման «Յոշուա» ժողովրդական ստուգաբանությամբ: Շարադրված վարկածը հնարավորություն է տալիս հասկանալ նաեւ որոշ դրվագներ, որոնք նախկինում տարօրինակ էին թվում: Օրինակ այն, որ խաչելության պահին ներկա չէին Յիսուսի այնպիսի մտերիմ մարդիկ, ինչպիսիք են նրա եղբայրները եւ քույրերը. դա կարող է բացատրվել նրանով, որ խաչելության (որպես՝ զոհաբերության) դրվագը Գալլացուն վերաբերող շերտից է, մինչդեռ քույրերն ու եղբայրները իրական կերպարներ են՝ Յուդացու շերտից: Կամ այն, որ Յիսուսի մոր եւ մորաքրոջ անունները նույնն են. Մարիամ:

Հասկանալի է դառնում նաեւ այն, որ քրիստոնեությունը չափազանց մեծ հեշտությամբ, առանց որեւէ դիմադրության տարածվեց հեթանոսական ավանադույթներով հարուստ կելտական երկրներում: Հավանաբար, ավետարանների շարադրանքում կելտերը տեսնում էին իրենց սեփական դիցաբանությունը, թեեւ վերաշարադրված եւ փոփոխված: Բայց ինքը փաստը, որ այն ճանաչում է գտել այլ ցեղերի շրջանում կարող էր հաղորդել ավետարաններին (կելտերի տեսակետից) լրացուցիչ կշիռ. չէ՞ որ «ոչ մի մարգարե ընդունելի չէ իր հայրենիքում»:

Ռուբեն Թարումյան
2005